


Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien
ARCHAEOLOGYE
(EGYPTE) LE CAIRE



ՊՈՅՄՈՒՆԻ

ՆԿԻՊՈՍ
Տարեկան գր. սղջ 30
ԱՐՏԱՍԱՄԱՆ
Տարեկան փրակց 10

Բաժանարար ՅԱԵԼՈՒՄ ԱՆԵՐ փոխարեն զճարտու՛մ գերմ պիտի ըլլան .

ԱՐՁԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Ք Ե Ր Ք

Թե՛ ԱՐՇԱՆՈՍՄԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ նիւթական խնդրոց համար պիտի Է զիտեղ ներքազրոյթեան հասցեով քերթիս Մասակարարին, որ Է՛

ԳԵՌՐԻ ՓԱՐՄԱՆԵՐԸ

Չի հրատարակուած ձեռագիրները
ևս չե՛ն սրուիր :
Բաժանորդագրութիւնը կանխիկ է . իսկ
ծանրացումները կ'ընդունուին մասնա-
ւոր համաձայնութեամբ :

ԿԵ ՇՐՏԱՐԱԿՈՒԻ ՇՄԱԹ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ուղղակի պատասխանա-
տու և՛ թելեց գրածներուն

ZUSE 20 ՓԱՄԱ ՈՂՁ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

1. - Կազմութիւն. 2. Կազմական գոր-
քեր. 3. - Նպատակ. 4. - Արդիւնք. 5. - Ա.
Բ. Տեղեկագիրներ. 6. - Հակառակորդներ.
7. - Ընկերութեան անցեալը. 8. - Ներկան.
9. - Ապագան 10. - Հ. Բ. Ը. Միութիւնը
ընդհանուր գծերով. 11. - Կանոնագիր :

Ե .

Տեղեկագիրները

Ու ըսին որ՝ Հ. Բ. Ը. Միու-
թեան ԿԱՆՈՆԱԳԻՐԸ միապետական
ոճով գրուած է :

Ասիկայ գրութեանը էր :

Եւ որովհետեւ մենք՝ հայերս՝
չառ արամազիր ենք գրութեանը
ընդ դատելու ամէն խնդիր ու ա-
մէն իրողութիւն, առանց վարկեան
մը իսկ կորսնցնելու, փութապէս
մեր ժողովրդականութիւնը համա-
ւել, ու մէկ մէկ կանոնագիր, որ
Հ. Բ. Ը. Միութեան հիմնադրին-
քը մեզի զրկելու պատիւը ըրած էին,
գրպաններ գրած՝ պատեցանք ք հոս ու
հոն, ցոյց տալու, քորակաւի դնե-
լու համար թէ՛ Միութիւնը « Միա-
պետական » հիմնու վրայ հաստատ-
ուած է, ու ասկէ զատ՝ որոշեցինք
որ . . . Միութեան գրամները Ռամ-
կավարական վարչութեան մը ձեռքով
մատակարարելու համար ՏԱԿՏԻԿԱՆ
փոխենք՝ և կուրսուրաի գործածելու
յարմարեցնենք :

Այս որոշումը Միութեան սկզբնա-
ւորութիւններուն մէջ տեղի ունեցաւ :

Տարին բոլորեց . ու Ն. Վ. Պօղոս
բաշա իր ժողովրդականասի-
րութեան մէկ ամենափայլուն ա-
պացոյցը տալու համար, տպեալ
տեղեկագրով իր համարատուութիւնը
ըրաւ « Միութեան » ընկերներուն և
ընդհանուր հայութեան միայնա-
մայն . ու տարի մը ևս՝ և ահա երկ-
րորդ տեղեկագիր մը՝ երեցաւ ընկե-
րութեան ընդհանուր վիճակը ընդհա-
նուր հայութեան պարզը :

Իսկ այս համարատուութեան
պարտականութիւնը կատարողը « մի-
ապետական » յորձըրջուած վարչու-
թեան վսեմ՝ Ատենապետը՝ Պօղոս
բաշան էր, և իր ստորագրութիւնը
մնացեալ հիմնադիր անդամներուն
ալ հաւանութիւնը կը նշանակէր :

Ասիկայ ալ գրութեանը էր :

Միապետական ըսուած վարչու-
թիւնը հանրութեան առջև ունեցած
պատասխանատուութեան չափը ըմ-
բռնած՝ կուգար հրատարակու իր
պարտաճանաչութեան քանակը ըզ-
դայնեւ մեզի - դժուարահաճներուս :

Ահա երկու երևոյթ՝ որ օթե-
րուութեանական գիտութեան հետ
ընաւ առնչութիւն չունի . Պարզ է
և յոտակ՝ եզրիտական ստեղծ պայ-
ծառ և կապտագեղ երկինքին պէս :

Կանոնագիր մը կայ մէջ տեղը՝
որուն համար՝ առանց անոր ներքին
միտքը և օգտակար կողմերը պըր-
պըտուելու կամ աւելի լաւ է ըսել
քիչ մը համբերելու « միապետական
է » ըսուեցաւ : Սակայն ասդին եր-
կու Տեղեկագիրներ կան, որոնք
յոտակորէն կ'ապացուցանեն թէ՛ Հ.
Բ. Ը. Միութիւնը իրապէս Ռամ-
կավարական է, ամէն խճճանքէ
հետէ՛ և ո՛ր և է կ'ոչ տար ակամ մի-
ութիւնէ անհամեմատորէն բարձր . .

Հոս կարելի է եզրակացնել ու-
րեմն թէ՛ միապետական և ռամկա-
վարական պլասթիցներ չեն որ
մեզի պէտք է զբաղեցնեն, այլ
ձեռնհասութեան և լստահութիւն
ներշնչելու խնդիր մ'ալ կայ :

Հ. Բ. Ը. Միութեան հիմնա-
դիրները, իրենց պլասթիցներ (նե-
րեցէ՛ք, կանոնագիրը ըսել կուզէի . . .)
միապետական ձե մը տալով մեզի
անուղղակի կերպով հասկցնել կու-
զեն թէ՛ ձեր կուրսուրաները աղէկ
կուլ ալ գիտցած են, ուստի մենք
ալ ապուշ չենք որ մեր քրտնաշան
վատակցը արդիւնքները փոխա-
նակ հայաստանին օգտակար դար-
ձընելու, կ'ոչ-տար-հա՛ւ . . . ի գոր-
ծածութեանը յատկացնենք : Եւ ի-
րաւի մեր մէջ մինչև ցարդ կազմը-
ւած հաղարարուր ընկերութիւններէն
և կուսակցութիւններէն ո՛ր մէկը
Հ. Բ. Ը. Միութեան նման ժողովր-
դէն ստացած դրամին հաշիւը կա-
նոնաւոր պայմաններու մէջ ներ-
կայացուց մասնաւոր տեսարկնե-
րու միջոցաւ :

Դարձեալ պահանջութեան պարտա-
ւորութիւնը թոյլ չ'տար ինձ հը-
րապարակ գնել կարգ մը ա՛յնպիսի
« ընկերակցական » հաշիւներ, որոնք
« միապետականութիւն » շատ
աւելի միապետական պայմաններու

ներքև թաքնուած մնացած են ու
կը մնան . . .

Կուրսուրա, Տակսիկա, Տեմոկ-
րուս, Պլասթից, ու ստոնց նման
օտարմուտ և վերացական բառերով
չե՛ն որ ռամկավարութեան ապա-
ցոյցներ կրնան տրուիլ . այլ իրական
ռամկավարութիւնը և եթէ կուզէք
ընկերակցութիւնը՝ այսպիսի պարա-
գաներու մէջ մանաւանդ՝ հրապա-
րակային համարատուութեան մէջ
կը կայանայ, ինչպէս ըրած է Եր-
կիցս Ն. Վ. Պօղոս բաշա յանուն իր
հիմնադիր ընկերներուն ալ :

Իայց հոս ալ ուրիշ մի նոր
հարց կը ծագէր :

Բնագրութեանը (՝) յաղթահար-
եալ ու ավիբերան մնացած էին .
Միութեան հաշիւները մէջ տեղ է-
ին . ասդին ու անդին ցանցնուած՝
բայց այլ ևս սովորական դարձած
ու արժէքէ ինկած ստորնարդը քը-
սութիւնները անբաւական դարձած
էին բուն իրողութեանց դէմ՝ յաղ-
թականորէն մարտաւելու . տակաւի-
կան՝ փոխելու էր ուրեմն . . .

Հայաստանի մէջ տիրող սովը
յարմարագոյն պարտուակ մ'էր ըն-
տրելագոյն « պլատֆորմներ » ստեղ-
ծագործելու և այնպէս ալ եղաւ :

Մէկ քարով երկու ճնճուակ
զարնէ՛լ . ո՛վ չ'ընէր : Մէկ կողմա-
նէ հայաստանցիները պաշտպանած
կ'ըլլային, առանց իրենց քսակին
փնտսելու ձրի ազգասէրներ կը դառ-
նային, ու միւս կողմանէ Միութիւ-
նը քանդելու ՏԱԿՏԻԿԱՆ յառաջ կը
տարուէր . . . Ու երբէք մտածող
մը չեղաւ այդ մեծապատիւ ազգա-
սէրներուն մէջ թէ՛ եթէ՛ փոխա-
նակ հրատարակը աղմկելու, կենցա-
ղագիտական միջոցով մը Ն. Վսե-
մութիւն Պօղոս բաշային գիտեմ մը
ըլլար, պիտի մերժուէ՛ր իրենց գի-
տեմը, անկեղծ ըլլալու պարագա-
յին մէջ : Միութե Պօղոս բաշա չ'պի-
տի՛ հաճէր, յարմար դատելու պա-
րագային մէջ՝ իր անձնական քսակէն
իսկ գոհացում տալ Հայաստանի տա-
ռապետներուն :

Բանաստեղծ մը, որ առ հա-
մեստութեան իր անունը բացարձա-
կապէս կը ծածկէ, իր ամենէն շատ
յաջողած տաղերէն միոյն մէջ Ն.
Վսեմութեան նուիրուած ոտանաւոր
մը սա՛ պէս կը վերջացնէ :

« Բանի Ձեզ պիտ որդիք ունի Հայաստան
Թո՛ղ այլ ևս Հայաստանը Հայոց սան »

Ու այս տողերը շարագրողը
հեռաւոր երկիրներ ընակող և Արա-
մազեան զիցաբանական պատգամ-
ներ արձակող մէկը չէ . այլ՝ եզրիպ-
տասի մէջ և իր բառերը ամենաժը-
լաա խնայողութեամբ գործածող :

Իայց իրողութեան մէջ այդպէս
չեղաւ գծադրաբար :

Հրանտ (Մեկըն կիւրծեան) գա-
ւառայեալապաշտի ներքին ակտուրը
վարակուած, գերագրգիւ վայրկե-
նի մը մէջ թերեւ՝ ուղեց « Միու-
թեան » գանձուն մինչև վերջին լու-
ման . իսկ սիրելի բարեկամս Տ.
Երուանդ Սրմաքչիւսնուլեան, որ կը
ցաւիմըսել, նամակի մը պատասխա-
նելու չտալ փափկանկատութիւն ալ
չունեցաւ, « Արեւելքի վերջին թի-
ւերէն մէկովը ելաւ Հ. Բ. Ը. Միութիւնը
յաշս հանրութեան վար-
կարեկելու ճգնիլ, Առիւծները մա-
համբձ » վերնատիտղոսով իր թմբա-
րապետի բոլոր ճկունութիւնները
գնելով իր բազմածաւալ թերթին
անդրանիկ սինակներուն մէջ :

Իայց, սիրելի՛ Երուանդ, դուն
որ այնչափ տարիներ եզրիպտոս ապ-
րեցար, տակաւին չ'հասկցար թէ
եզրիպտոսը իմ և քու կարծածէտ
չառ աւելի նրբութիւններ պահան-
ջող երկիրն է : Եթէ ատանկ պիտի
ըլլար՝ մեր նոր Երեսփոխանէն ալ
յոյսերնիս կտրենք բոլորովն . . .

Երեկ հարուստ բարեկամի մը
քով կը գտնուէի : Տե՛ս ի՛նչ հակա-
սութիւն . աղքատ քարտուղար մը
աղքատ թմբադրութեան՝ և մեծա-
տուն մը դէմ՝ գիմաց, Հաւատացի՛ր,
սիրելի Երուանդ, որ Ձեզմէ շատ
ու շատ աւելի լացաւ « Մահամբձ
Առիւծներուն » վրայ . . .

Եթէ ո՛ր և է հայերի դրամարկի
մէջ սակիներ գտնուելը բաւական է
անոր տէրը կամ տէրերը անհանգիստ
ընելու համար, ուրեմն ինչու՞ թեզի
ամենամանօթ կուսակցութեան քիւ-
րօյն մէջ գտնուած տասնեակ հա-
զարներով սակիներէն բաժին մը
- բայց դոնէ բաժին մը - չ'հանուիր
« Մահամբձ Առիւծներուն » :

Դարձեալ քանի որ պատրաստ
դրամի այդքան սիրահար էք, - և
ինչո՞ւ չ'պէտք է ըլլանք . - կիւ-
րսի Որբանոցին պահեստի գումար-

ներէն 800 ոսկի կայ Տիար Եղիազարեանի քով . սա աւելի նպատակայարմար է կարծենք Հայաստանի թշուառներուն յատկացուելու համար : Ինչո՞ւ չէք ուղեր անկէ , եթէ ձեր « Միութենէն » ուղելուն մէջ մասնաւոր դիտումներ չ'կան :

Ուրեմն՝ ա՛լ չի քննադատենք Հ. Բ. Ը. Միութիւնը , եթէ կը հաճիք :

Ե. ՅՈՐՈՍԵԱՆ

Յ. Գ. Յառաջիկայ թուով տեղեկագրիներու մանրամասնութիւններէն :

ՆՈՅՆ

ՎՐԻՊՍԿ

« Արշալոյս » ի նախորդ համարին - Շարաթ օրուան - թիւերը աճապարանքի և մուսուլմանի հետեւանքով չ'փոխուելով՝ 516-44 ըլլալու տեղ , 515-43 թիւը կրած է :

ՄԵՐ ԲԱՏԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր արտասահմանի և եթովպիոյ բաժանորդներէն կը խնդրուի որ հաճին փութացնել իրենց բաժնեգրիներէն , նկատելով որ տարւոյն վերջին ամիսը կը թեւալոյնենք :

Այսպէսով մեր յարգելի բաժանորդները մեզի խնայած կը լինան մասնաւոր դիտումներու առթիւ ըլլալիք ծախքերէն և ժամավաճառութիւններէ :

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆԻՆ

Պարոն ,

Հաշուետուութեան շրջանը բացուած է այլևս Աղղի մէջ՝ Պատրիարքարանէն սկսած մինչև յետին պաշտօնեան կը ստիպուի ազդի տալ Աղղին այս անաչառ պահանջին առջև : Կը ներէք ինձ որ ես ալ հարցնեմ ձեզի , թէ դուք ե՞րբ պիտի տաք ձեր հաշիւը . ըսել կ'սուզեմ՝ Մորենիկ զիւղի եկեղեցիին կողմապատմի հաշիւը , Ի՞նչ , որ մեր գէպի Սբ. գործը ունեցած նուիրումի տրամագրութիւնները չհազարծելու չափ ստորնացաք : Մեզի համոզելիք որ դիշերանց մտնենք եկեղեցիին ու գողնանք բոլոր սրբազան անօթները : Արծաթեղէնները հալեցնելէ և զգեստներն ալ ձեռք ծանօթ վաճառուելէ վերջ՝ դոյնացած դրամով մեզ պիտի շինէիք , խաչաձև փամփուշտներով քու Գայլ Վահանիդ կուրծքը պիտի զարդարէիր : Այսպէս լոկ խոստումներով երեք ամիս մեզ օրորելէ վերջ , մեր վերջնական պահանջին ի պատասխան անամթաբար ելաք յայտարարելիք թէ՛ Պարապ տեղին է եղեր մեր բոլոր աշխատութիւնը , վասնզի բոլոր խաչերն ու ուրիշ սրբազան անօթները հալեցնելով գտած էիք որ փոխան արծաթի սյանն են եղած : Շիտակը խօսէ , Պարոն Պաթօնագէտ Խմազիր , իրա՞ւ Մօրենիկի եկեղեցւոյ գոյքերը պաթօն էին թէ՛ հալեցնելով կուր տալէդ վերջ պաթօնացան : Կը սպասեմ :

(Ա.ԶԳ) ԳԱՅԼ ՎԱՀԱՆ

ՄԱՆՁՈՒՄԷ 2260 ԹԻԻ, 6 ՆՈՅՄ . 908

ԵՐՈՒՍԱԶՆՄԻ ԳՈՐԾԵՐ

Երուսաղեմի Միաբանական Ժողովոյ 16 անդամներ , ի պատասխանի Տ. Յարութիւն պատրիարքի և չորս վարդապետներու հեռագրին , թերթիս ուղղուած հեռագրով մի՛ ըսելէ ետքը թէ՛ Տնօրէն Խորհուրդը լուծուած է , կը պահանջէ անմիջական հեռացումը սպասուող Աւետիսի , որ դրդին ու պատճառը եղած է չատմը ապօրինութեանց , ինչ որ հաստատուած է նոյն իսկ տեղական Կառավարութեան կողմէ :

ՆԱՄԱԿ ԵՐՈՒՍԱԶՆԵՐԷՆ

ՍԱՀԻՍԱԿԱՆ ԽՆԴՐՈՑ ԾՈՒՐՁ

Ս. Յակովբեանց վանքի շինծու ու ստեղծուած « Հաշուապահանջութեան » գործեան հանդոյց խնդիրը՝ որ գործուած ամէն զեղծմանց նախադուռ սկզբնապատճառը եղաւ ողջոյն ազգը խաբելու ու հաւատացնելու՝ դեռ հեղինակները այդ մտքներէն սկզբունքով կը խզակեն զիրենք ճշմարիտ հաշուեպահանջ ցոյց աւելու , հաշուապահանջութեան խնդիրը մատերնուն փաթտած ամեն հաշիւներ կը իւրացնեն , Աստուած ի՞նչ օղբապաղութիւնը հաշուապահանջութեան լարին վրայ խաղալու , ու հանրութեան կոյս մտքերն պղտորելու : աչք ունեցողը թո՛ղ տեսնայ , սիրտ ունեցողը զգայ ու հաւատայ :

Ո՛հ , պատրուակ մ'զր ամենէն տիպլոմաթիկ դիւանագէտը անգամ ամի ի բերան կը մնայ այս գոռում գոչումներու ամպոց առաջ . ամպեր՝ որ առանց անձրեւելու կ'անցնին յուսախար ձգելով միամիտ ազնկալուներ : Բայց հարկ է հաւատալ թէ՛ նպատակաւոր սիրտ մը որքան ոգի ի բռնի տքնի , ջանայ՝ ստույգութեան քողին տակ՝ բարեբար ժամանակը իր վեճալ աղբեցութեամբ անոր սրտին տակ սրտին ծաղքերուն խորը ծածկուած խորհրդոց վարագոյրը կը վերցնէ ու « ճշմարտութիւնը ծաղիկներով զարդարուած զոհի պէս սրբութեան սեղանը կը բարձրացնէ , և վաղընդօրին խոտաբուսութեան հանդէս կը բերէ՛ ու ամեն բան իր կենդանի գոյներով զգալի , տեսանելի , և հաւատարի կ'ընէ , թուք ու մուրքսել կուտայ այն խաբեաններու ճակատը՝ սիմօնականութեան ոգւոյն խնկարկած են անմեղութեան դիմակի ու քողի տակ գործած են . . . :

Մեր նպատակը սիրելի ընթերցողներուն միտքը լուսաբանելու է ուրեմն . օ՛ն անգր առաջ մի՛ ձախ , և մի ալ զի ստույգութիւնը ճշմարտութեան ճառագայթները կը խափանէ՛ ինչպէս ի ծագել արեգական կորնչին աստեղը զիշերային խաւարի Ստույգութիւնը հաւատալէ աւելի ծիծաղներու տեղի կուտայ , ստույգութիւնը ու բաղձանքները գորդեան հանգոյցներ կը կնճռոտեն՝ բայց հաւա-

տալ պէտք է թէ ճշմարտութիւնն ալ՝ Աղէքսանդրու սուրին պէս լուծելով այդ հանդոյցը մէկ կողմ կը ձգէ :

Շատ անգամ լսած ենք թէ՛ գողերը գող բռնելու ելած են , և ճշմարիտ գողերը իրենք եղած են՝ օձիքնին արգարութեան ձեռքը տալով : Հին Հռովմայ կայսերացինք նախալուծեան պատմութեան մէջ սա՛ ծիծաղ շարժող դէպքը կարգացած եմ , և քանի՛ անմեղաց կը յիշեմ : Աւազակ մը իր կողպտած մէկ անմեղին դատախազը կ'ըլլայ և անմեղը կախաղան կելլայ . իմաստուն մը այս անխիղճութեան չը հանդուրժելով կախաղանին կը մօտենայ ու վրան այս տողերը կը գրէ . « ո՛վ կախաղան . անմեղները քու վրադ կախուելու համար պատրաստուած ես . » գրուածին իմաստը ծերակոյտին ականջը կը հասնի՝ ու գրողը կ'անջնջով բացատրութիւն կ'առնեն , և կ'իմանան թէ արդարը պատժուած է ու անիրաւ գողը սանձարձակ ձգուած է ասպարէզի վրայ դործելու . . . բայց ժամանակը կը մատնէ որ ըրածներով ու դատաճանը պատժոյ կը դատապարտուի . ահա՛ ժամանակի հրաշքը :

Ս. Յակովբեանց վանքի « Հաշուեպահանջ »-ը որ իրենց նաւատորմիցը հաշուապահանջութեան ուսման ներով սպառազինեցին իրենց բաղձանաց հանդէպ թուք եղած « բերդը խորտակելու » պահ մը զիրենք նպատակնուն նպատակակէտն հասած գտնալով՝ գործեցին . ազգը միամիտ կարծելով վարդ քաղելու յոյսեր ներշնչեցին , վարդ քաղեցին և իրենց գրպանի կողովն լեցուցին . . . փուչերու խուրձն ալ կապելով խաբուած կարծած աղղին ուսը բեռցուցին : Շիտակ մրցանակներու արժանի են սա՛ չիբացած հաշուապահանջներն որ ամենէն հեղինակ փորձառու կարծուածներն անգամ իրենց «տօլապը» ձգեցին , այնպէս որ փորձառու ենք ըսած ժամանակնին՝ իրենց ամենեկին անփորձ ըլլալին ցոյց տուին :

Հրաւէր կը կարդամ ազգին՝ և դեռ մինչև ե՞րբ հաւատալ պիտի կեղծէ ու անտարբեր Յովնանու քունը խորդա հաշուապահանջներու այս քանդիչ ցեց պակասին զեղծմանց հանդէպ՝ որ փառաւոր հաստատութիւն մը արագընթաց քայլերով կորստեան անյատակ վիճն կը յաւաճանայ , Պետրոսի պէս ձեռքը օգնութեան կը կարկառէ « Ե՛ք օգնեա՛ններու մեղամալձիկ ձայնով . աւա՛ղ որ ամէն ոք Ղևտոսի քահանայի պէս անտես մնացած աչքով կը դիտէ ու կ'անցնին , արդարև « մի՛ յուսայք յիշխանս յորդիս մարդկան » գրուած է՝ բայց գրուած չէ մի՛ յուսաք յազգս ձեր . . . :

Երուսաղէմայ Ս. Յակովբեանց վանքը որ շինծու հաշուապահանջութեան երկունքի ճիշտու բըռնուած էր և յայտնի էր թէ երկնող ահաղին լեռը՝ շնչին մուկն պիտի ծնէր , Աղղ . Կեդր . վարչութիւնը իր բանագրացի անունով թեւեան և Խաչատուրեան էֆ. ներն

խնդրոյն իրազեկութեան զրկեց . խնդիրը յերիւուած պատրուակ մ'էր իմացուեցաւ և եկողները ձեռքերնին լուալով խնդրոյն մէջէն դուրս ելան : Խնդիրը խնդիր մնաց և ըսկըսաւ բարեկենսան հնոցի պէս ալ աւելի հրայրիւ և յունականի կրակի կերպարանք առնել : Աղղ . վարչութիւնը նախորդ ելեմոսից գործօն և բաղձարդիւն տեսուչը Պօլիս ուղեց իրեն գէ՛մ լարուած խորհրդաւոր . . . մեքենաներէ ցնցուած բացարուծութեանց համար : Հաշուոց խնդիրը Պօլիս կերթայ որ միայնակ պատրուակ մ'էր : Հոս հաշուապահանջ իրենց գիրքերը Բարթ-Արթիւրի պէս ամբարջնելու ջանքին մէջ բնաւ չեն թուլանար , վանքի ղէկը ձեռք բերած յալթանակով առջեալ՝ ամեն զեղծումներ կը գործուի և վանքը նիւթապէս և քաւոյնապէս վնասուելէ զատ՝ Ս. տեղեաց իրաւունքները վրայ կերթան և բոլոր ազգաց լեզուները մեր վրայ կ'երկարին . ահա՛ հաշուոց խնդիրը՝ որ խնդիրներու խանձարուրի կապերը քակեց :

Պօլիս՝ չորս խղճահար և անշահախնդիր պատուաւոր անձինք , - « Երուսաղէմայ հաշուոց իրաւունքները յանձնաժողով անունով Երուսաղէմայ հաշիւները կը քննեն , նախորդելեմոսից տեսուչը իրենց անկողնակալ տեղեկագրով կ'արդարացնեն՝ իսկ այժմու ելեմոսից ծաղիկ Ս. գրչոց տեսչի՝ որ իր միակ ջանքն էր ելեմոսից տեսուչ ըլլալ թաքուն դիտաւորութեամբ . . . այս վճիռն կուտան . « Գայգճեան Մատթէոս վարդապետ յոյսերու և նպատակներու թեղաբուծեամբ տղայաբար , անմտաբար հաշուոց խնդիրն ստեղծած է . . . » և ըն .

ՆԱՄԱԿ ԳԱՀԻՐԷՆ

Պատ . Խմբագրութիւն Արշալոյս Լրագրի Ի Բաղաքիս

Հաճեցէք անկիւն մը շնորհել Ձեր մտակայ թիւերէն միոյն մէջ ներփակեալ գրութեանս , որով զիս շնորհապարտ կացուցած պիտի ըլլաք :

Հաճեցէք ընդունիլ խորին յարգանքներս :

ՏԵԼԵՄԱՒ ԲԱՐԹՈՂԵԱՆ

Գահիրէ 18 Նոյ . 908

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Գահիրէի Պատ . Բաղաք . Ժողովոյ նախագահին և յարգելի Անդամոց :

Անցեալ Հոկ . ամսոյ 28 ին պահանջարեալ նամակով մը խնդրած էի Պատ . Ժողովէդ սր բարեհաճի՛ ստանալով Առաջնորդարանի սակացոյցին մէջ նշանակուած օրինական ծախքը - թիւ կայ - շնորհել ինձ վաւերացեալ մէկ պատճէնը հանրագրի մը , որով մէկ քանի պարտներ , զիս յանդիւրի վատահամբաւելու դիտաւորութեամբ մատուցած են եղեր ժողովոյդ , ինչպէս ինք - ժողովը - յայտարարեց ինձ ասկէ առաջ իր նիստերէն միոյն մէջ :

Արդ՝ պատիւ ունիմ հարցնելու հրապարակաւ թէ՛ ինչո՞ւ Պատ. ժողովը չբարեհաճեցաւ իմ օրինաւոր խնդրանքին գոհացում տալ :

Յարգանք

ՏԵԼԵՄԱՔ ԲԱՐԹՈՂԵԱՆ

Գահիրէ 18 Նոյ 908

Մանօթ .- Սոյն բողոքախառն հարցադիրը 3 օրինակի վերածուած, զրկուած է «Արշալոյս» «Լուսաբեր» և «Արև» տեղական երեք Հայ թերթերուն հրատարակութեան խնդրանքը :

ՆՈՅՆ

ՏԻՓԻՆ ՍԻՐԱՆՈՒԹ

Թիֆլիզէն հետեւեալ վճարներոյ ընդօրինակութիւնը զրկուած է մեզի, Տիֆլին Սիրանոյ շրջանային ժամօթ խնդրոյն առթիւ :

Յարգելի Տ . Սիրանոյ

Մենք, ներքեւում ստորագրողներս Ձեր և Պ . Բրուտտի կողմէ ընտրուած վեց դատաւորներս, նախնական ժողովի հաւարուելով, երկար խօսակցութիւն ունեցանք և յարմար դատեցինք հաշտութիւնով վերջացնել, այդ վերին աստիճանի անսխորժ և վարկաբեկող գործը : Մենք յորդորեցինք Պ . Բրուտտին դադարեցնել իր մեղադրանքները, համարելով թիւրիմացութիւններ ի մի պարզ հետեւանք :

Իսկ Ձեզ յարգելի Տիֆլին, դիմում ենք սրանով և յորդորում վճարել Պ . Բրուտտին 200 ռուբլի իր վարձատրութիւն նրա կրած վճարաների, որոնք հասել են արգարացի թէ անարգար . մենք չենք մտնում այդ հարցի ընտելութեան մէջ : Եթէ այս նամակին բացասական պատասխան տաք, յարգելի Տիֆլին, մենք ստիպուած պիտի լինինք հրաւիրելու ընտրուած նախագահ-փաստաբան Պ . Սամսոն Յարու-թիւնեանին ու կանանաւոր դատ ըսկըսել :

Ընտրուած դատաւորներ

ՂԱԶԱՐՈՍ ԱԶԱՅԵԱՆ

Գ . ԽԱԺԱԿ

ՆԻԿ . ԿԱԺԱԺԵԱՆ

ԱՐՇԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱԻԵՏԵԱՆ

ԳԱԼ . ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Տիֆլիս 908 Սեպտ . 20

Մանօթ .- Մասնաւոր նամակներէ հետեւեալ տեղեկութիւնը կը քաղենք այս մասին :

200 ռուբլի վճարումը չընդունեց, յայտնելով որ խմբին է պատկանում, և դատաւարութեան ենթարկելու քայլ ոչ մանրամասնութեամբ քննուեց գործը . ինչպէս ասի՝ ծանրակշիւ մեղադրանքներին համար անուշ տեղը կապելու ջանքեր են լինում :

Ա.Չ.Գ.Ա.ՅԻՆ

Ե Ո Ր Ր Ր Ր

ՊԱՏՐԱՐԻ

Ամենպատիւ Իգորեան Սրբազանի վերընտրութիւնը հաստատող Պէրթը Պատրիարքարան հասնելով, անցեալ շաբթու մեծ հանդէսով Իգորեան Սրբազան Իւսկիտարէն Գում Գաիուի Պատրիարքարանը փոխադրուած է :

ԿԱԹՈՂԻԿՈՍ

Կաթողիկոսական ընտրութեան պատգամաւորներուն կողմէ տրուած հեռագրերը կը տեղեկացնեն թէ Կաթողիկոսական ընտրութիւնը կատարուած է և առաւելագոյն քուէ շահած են Ամենպատիւ Իգորեան և Գումեան Սրբազանները :

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Հանդուցեալ Վեհ . Կաթողիկոս Խրիմեան Հայրիկի մահուան տարեգարձին առթիւ վաղը՝ Կիրակի 22 Նոյեմբեր, Գահիրէի Ս . Աստուածածին եկեղեցոյն մէջ հողեհանգստեան պաշտօն պիտի կատարուի :

Եկեղեցական արարողութիւններէն յետոյ աւուր պատշաճի երգեր պիտի երգուին և ճառախօսութիւններ պիտի կատարուին :

ԳԱՀԻՐԷԻ ԵՐԵՄՅՈՒՆԵԱՆ

Անցեալ Կիրակի Գահիրէի Երեմիականները միախորհուրդ Աղէքսանդրիոյ երեսփոխաններուն, 11 քուէով Պոլսոյ կեդրոնին երեսփոխան ընտրած են Պ . Վահան Թէքեանը Եգիպտահայութեան, որուն գործը պիտի ըլլայ Պոլսոյ Կեդրոնին մէջ իր պատկանած կուսակցութեան (վերվերակագեալ) շահերը պաշտպանել ամենարուսէն զօրութեամբ :

ԱԿՆՈՒՆԻ

Գումգաբուի Մայր եկեղեցոյն մէջ Նորընտիր Պատրիարքին Օսմանեան և Հայկական Սահմանադրութեանց անվթար պահպանմանը համար տուած երդման արթիւն, Պ . Ակնուհի յանուն Հայ Յեզ . Գալիակցութեան խոտապած է իր ճառին մէջ թէ՛ Իգորեան Սրբազանի կաթողիկոսացման պարագային՝ եթէ Գալիակցութեան ուժերուն պէտք ունենայ . իրենք միշտ պատրաստ պիտի ըլլան օգնելու Նորին Ամենպատուութեան :

Միւս ընդոր կուսակցութեանց ներկայացուցիչները, այսպիսի խոտուում մը իրենց կողմէ կանխուած չ'լինելուն համար իւրովի նախանձած են կ'ըսին :

Պոլսոյ երեսփոխան ժողովին մէջ տակաւին կուսակցական « Ես և դու » ի պայքարները սկսած չեն, բայց յոյս յայտնողներ կան թէ՛ մտատենէն կարճ ատար պիտի գայ ընտանական ճամբաներով :

ՄԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Եգիպտական կառավարութիւնը ժամանակէ մը ի վեր գաղթեցուցած է ընդունել ազգային Սահմանադրական ժողովոց ձեւնահաստութիւնը և կուղէ եղեր որ տեղական պահանջմանց համաձայն կանոնադիր մը պատրաստուի հայերու համար, և կառավարութեան վաւերացուի :

Այս հիման վրայ Ազգային Առաջնորդարանը Եգիպտահայոց համար « Նոր Սահմանադրութիւն » մը պատրաստել տուած և մատուցած է կառավարութեան ի վաւերացումն :

Այս հաշտով Եգիպտահայերը Անկախ-Եգիպտական կառավարութեան օրէնքները իւրայնելով, պէտք չպիտի ունենան շատ մը գործերու համար Պոլսոյ Օսմանեան և Հայկական կեդրոններուն դիմելու և անոնց հրահանգներուն սպասելու :

Պէտք է ըսել ուրեմն թէ՛ մեր երեսփոխանը, Եգիպտահայոց գործերուն շատ ժամանակ յատկացնելու պէտքը չունենալով, ընդարձակ ժամանակ պիտի գտնէ կուսակցական հաշիւներով զբաղելու . . .

ԱՐՏԱՔՍՈՒՄ

Երուսաղեմի Միաբանութեան մէջ երկար տարիներէ հետէ անասելի շահատակութեանց և խայտառակութեանց ամենազիլաւոր պատճառներէն մին եղած տիրահալակ Չիզուլցի Աւետիս Թաճեան, մասնիչներէն մին՝ Հոգեւոյս Տ . Աւուր Եգիպտոսոյ Շիմանեանի, որուն համար և գէմ « Արշալոյս » ամսանորէ հետէ բողոքալի յօդուածներ կը հիւրընկալէր իր նեղ էջերուն մէջ, Երուսաղեմի կառավարչին պնդումներուն վրայ վանքէն արտաքուստ է խայտառակարար :

« Արևելք » ինչպէս նաև Պոլսոյ միւս թերթերը այս լուրը կը հաստատեն :


« Լուսաբեր » Յետ երկարատեւ լռութեան, իր ծայրայեղ պահպանողականի նկուղէն պահ մը դուրս կելլէ, վանքին հիմերը խախտող այս անպիտանին արտաքուստ ծանուցանելու համար լսի : Իսկ մեր Պէրթութի « Ազատական » ակնատես այդ վայրավատին հրէջին Պէրթութի մէջ կատարած թափառումները . . ., փութացած է մեզի ծանուցանել մասնաւոր նամակաւ մը, որ այսօրուան թուով լսյ կը տեսնէ :

Վերջին բառը ըսելու համար վերադառնալ Աւետիս անուն մասնիչ-հրէջին նկատմամբ, աւելցնենք թէ՛ աս Միաբանութեան վրայ ազդեցութիւն ունենալու և անտեղի ճշտումներ ի գործ դնել կարենալու համար անոնց վրայ, յանդգնութիւնը կուրենայ եղեր Սաղիմայ ծերունազարդ Յարութիւն Պատրիարքին երեսն ի վեր պօռալու թէ՛ « Ես և դու » ի վեր իրան ըստ . . . » և այս՝ ուր :

տաւորներու ստուարախիտ բազմութեան առջև :

Յուսելի պարագայ մը եթէ կայ, այն է որ այսչափ ձիգ տարիներ այդպիսի լիտի և անբարոյական աւաղակի մը թոյլ տրուած է վանքին նուիրականութիւնը ոտնակոխելու, անունը ազարտելու և անոր հարստութիւնները կողպատելու անխայ :

ՎԱՐԴ ԵՒ ԶԱՐԴ



ՏՆԻՆԻ ԼՈՒՍԻՆԻ Պ . ԶՈՒԱՐՈՅ

ՄՈՒՍԲԻ ՇԱՐԱ ՄԻԻԶԷՅԻՆ

ԼԱՏԻՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՃԻՇՏ ԴԻՄՍԱԸ

ԱՐՈՒՅՍԱԿԱՆ ԾԱՂԿԱՆԵՐՈՒ

ԱՐՔԵԼՅՅԵ

Հարսանեկան գեղակազմ պուզներու շքեղ ծաղկեկոդոններու, պսակներու և բեղոյրի (շափղա) հրաշագեղ ծաղկերու ունենալու համար մի դիմէք այլուր :

Մեր գիները զիւրաժատչելի են և պարանքները անմրցելի :

Փորձի համար անգամ մը այցելողը, ապահովագէտ մեր մնալուն յաճատորը պիտի ըլլայ :

Մեր տարիներու փորձառութիւնը այսպէս ըսել կուտայ մեզի 31-43 Տիպ . Լ . Պ . ԶՈՒԱՐՈՅ

ՆԱՄԱԿ ՊԵՅՈՒԹԻՆ

ԹԷԼԼԱՔ ԱԻԵՏԻՍԱԸ

ՎԱՆԻՔ ԱՐՏԱՔՍՈՒՄ

« Եւ արդ ուրախութիւն մեծ . . . »

Վերջագէտ Երուսաղեմի անմիաբան Միաբանութիւնը միաբանեցաւ այս զաղիր և գարշելի արարածը վտարել իր մէջէն որ՝ սարսափ և պատուհաս եղած էր վանքին :

Այս անամօթ մարդուն վանքէն հեռացման պարագաները թէ և անծանօթ են ինձ, այսու հանգերձ ինչ որ ալ ըլլայ զովքի են Միաբանութեան ջանքերն որոնք՝ Վանական սղոտու ընթացին օրով, երբ Աւետիսեան Տիֆլիզը կը չալուէր՝ միամիտ ոչխարներու նման տիտիկին ձայնին կը հետեւէին, առանց զիտնալու թէ՛ իրենց առջև անգին վիճ մը կար բացուած որ՝ զիրենք կու տուու պարաստ էր, առանց մտածելու թէ՛ որքան այս գաղանին երկրապագութիւն ընէին, այնքան ունեցած բարոյականին վերայ կ'ուտային, որուն համար արդէն քանիցս գրուեցաւ Վ . Պոլսոյ թերթերուն մէջ սակալի անլսելի մտացին, նայիսկ « Իր վանքի ոտն » Տնօրէնը Տիար Բէշեան էֆէնտին կը պօռար թէ « Այս անպայ տարրը

ԵՂԻՇԷ ՓԱՄՊՈՒՔՃԵԱՆ

ՇԱՐԷ ԱՊՏ ԷԼ ԱԶԻԶ ԳԱՐԱԳՈՒՆ ԴԻՄՍԱԸ

Միակ ներկայացուցիչն է Ազգային Հիւանդանոցի Սիկարի թղթերուն, կը վաճառէ մեծաքանակ և փոքրաքանակ :

1909 տարւոյ պատի և դրպանի օրացոյցներ գնելու համար միայն մեր վաճառատունը դիմելու է, և կամ դիւրութեան համար Արշալոյսի Տպարանը :

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻՄԱԽՈՏԻ ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐՔԷ ՓՈՂՈՑ ԷՕԶՊԷՔԻՅԷ



ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐՔ

Ն . ԵՒ Ա . ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐՔ

ՅԱՏԿԱՆՈՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵՍԼ Է .

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գներով ունենալու կամ վախելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՛ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամալաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին .

Պարսկական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալիլ է .

Մեր վաճառատունը վերջապէս, գիներու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբ անմրցելի է, սրուն անմիտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն . ԵՒ Ա . ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐՔ

պէտք է հեռանցել վանքէն, որ պէտքի վանքը կորուսած խաղաղութիւնը գտնէ՝ սակայն ցաւ է ըսել որ՝ ո՛չ ո՛ք համարձակեցաւ բան մը ընելու, որովհետեւ Աւետիսեան տիւտիկը չեմ գիտեր մոգական ի՞նչ մը ունէր իր մէջ որ իրեն կը մաղնիսացներ ամբողջ միաբնակութիւնը, Պատրիարքէն մինչև « չէօփճիւ » միաբանը . Սակայն պէտք էր ջախջախուէր այս հրաշագործ տիւտիկը, վանական մզլոտած ընթացիկ տեղ պէտք էր նոր Րէթիմ մը հաստատուէր, և եղաւ որ թմրած միաբանութիւնը արթնցաւ իր խոր քունէն, հասկցաւ տարիներէ ՚ի վեր գործած մեծ սխալը, զգաց որ վիճին մէջ ինչպիսի մաղ մնացեր է, չուտով իր վրայէն թօթուեց Աւետիսեան հին վերարկուն, հաղաւ Արդարութեան և Ազատութեան լուսապայծառ ծիրանին, և սկսաւ ազատորէն գործել, առաջին գործը եղաւ ջախջախել մեծ-վիշապին զըլուխը որ պէտքի միւս անգամները անգործութեան մատնուին, վերջապէս շատ մը աշխատութիւններէ վերջ յաջողեցաւ վանքէն արտաքսել տիրահոշակ Աւետիսը .

Ամսոյ 8 ին (Ը . Ե) կիրակի օրը քաղաքիս Ս . Նշան եկեղեցիին մէջ, սեբրէ- յաննախնով ոսկի ակնոցով և գաւազան 'ի ձեռին՝ մէկը երկեցաւ, որ շիք յաջիւրիսայի կերպարանք ունէր, մանաւանդ մըկըրատուած մօրուքը և կարմիր ֆէսը այնպիսի farouche դէմք մը կ'ուրուագէր որ՝ կարծես Պապը-Ալիի հայակեր պաշտօնեաներէն մին ըլլար, սակայն ո՛չ, նորեկը՝ անոնցմէ աւելի վայրագ, անոնցմէ աւելի հայակեր հռչակաւոր Աւետիսն էր որ՝ առանց խոսելու եկեղեցի եկած էր իր շնորհալի պօլը ցոյց տալու համար .

Տեղւոյս նորահաստատ գրադարանին ալ՝ 40 ֆրանք նուէր տուաւ . որո՞ւ գրամը որու կուտաս է՞յ գող և աւազակ մարդ, Ազգին արիւնը ծծեցիր, բազմադարեան վանք մը քանդեցիր, Աստուած ալ քեզ քանդէ . Տարուք արբանեակներուդ . Պէյրուի 16 նոյեմ .

1908 Ա.ՉԱՍԱԿԱՆ ՄԸ

ԵՄԻՍՈՒ ԳԻՐՔԵՐ
« Արշալոյս » ի տպարանին մէջ, Շէրիֆ բաշայի պարտէզին գիմաց՝ կը վաճառուին հետեւեալ պրօշիւրները .
Ա . ՊԱՆԱՆ
ԺՈՂՈՎՈՒՐԳԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԸ
Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ
« 2 Հիւլէն 50 »
Թիւ 3 պրօշիւրը թէեւ հրաշալիք մը բայց ինչ ինչ նկատուածներով զանց կընենք անունը յիշատակել կարճ ժամանակի մը համար . գինն է մէկ ֆրանք .
Գիմել Արշալոյսի հմբապրութիւնէն զատ Հեղինակին հասցէին որ է .
Mr . A . Balian
Le Caire


ԱՐՄԻԻ
Ազգային, Գրական, և Բազաքական կիսամսեայ հանդէս, որ կը հրատարակուի ամէն ամսոյ 1 ին և 16 ին . Տարեկան բաժնեգինն է արտասահմանի համար 7 ֆրանք, վեցամսեայն՝ 4 ֆրանք բացարձակապէս կանխիկ .
« ԱՐՄԻԻ » ը Ամերիկայի ամենէն անկախ անաչառ և անվախ հանդէսն է, որուն Խմբագիրը, միս միւսակ, կրցաւ օրոտասահմանական յեղափոխարուծներ և գրամաշորթներ քօղամերկել ու ջախջախել .
« ԱՐՄԻԻ » ը շարունակ կը հրատարակէ գեղեցիկ բանաստեղծութիւններ, ու Եւրոպական գրականութեան հոյակապ նորապիւտեր . Իր թիւ ժ . էն սկսեալ կը թարգմանէ « Եսթեր » անունով հայկական վէպ մը, որ 1901 ին լոյս տեսած է Անգղիոյ մէջ . Հեղինակը, Վարդէնի կեղծանունով, մօրը կողմէն անգլուհի, հօրը կողմէն հայուհի մը, ակնատես զած է 1896 ի կոտորած ին զոր նըկարագրել կը ջանայ անոր ամբողջ սրտակեղծութեամբը . Վէպին հերոսը անհատ մը՝ կամ Ժողովուրդ մը չէ, այլ Սուլթանին արիւնապետութեան կարմիր Արհաւիրքը .
« ԱՐՄԻԻ » ի բաժանորդագրուելու ուղղութիւնը թող գիմեն Խմբագրութեան կամ ուղղակի իր հասցէին .

Editor of ARDZIV
P.O.Box 2285 Boston - Mass .
Յ . Գ . Ապառիկ ապսպրանքներու շարքութեան չեն աւնուիր .

ՍԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻՍԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԷՐ

Պալատի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց . Գաֆէ Տը Լա Պուրսի կից
Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ
Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկըրներն են և ասոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է .
400 և աւելի վիսյակաւ եւ մեքենաներով վարձատրուած, Երաշխատեալ մեքենաներ,
ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ
Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախիսին մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՅ ԿՍՅՍԵՐԱԿԱՆ
ԿՍՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԳՈՒՆԻՒԹԻՆ ԵՒ ԹԱԳՍԻՈՐԱԿԱՆ ԱՐԳՈՒՆԵՍՅ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԽՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Սինկըրի յասկանջիմ
ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

ՕՐԹԷԼ ՏՐԱՊԻՋՈՆ ԱՂԷՔՍԱՆԴՐԻՍ

Քանթօ, Սուգուլ Մանկաի
3 Թէֆֆիէք-էշ-Գայրանի փողոց 3
Մանկաի Մզկիթին դիմը, Թիւ 3
Պանդուկապետ - Մ . Գէորգեան
— օ —
Կը յանձնարարուի արգոյ հասարակութեան և ի մասնաւորի մեր հայրենակիցներուն քաղաքին կեղծողներ գտնուող և օղաւէտ զիրքով սոյն պանդուկը, ուր յաճախողները պիտի գտնեն կատարեալ մաքրութիւն և փութական սպասարկութիւն .
Գիմեցէք անգամ մը և դո՛հ պիտի մնաք .
Գիները չափաւոր են . 28-55

ԿՍՐԵՒՈՐ ԱԶԳ

Գաւառներու համար Գործակալներու պէտք կայ գիմել Թերթիս Խմբագրութեան հասցէին .

ՍՍՐԳԻՍ Յ . ԹԱՇՃԵԱՆ

Նորոգիչ կարի մեքենաներու, ֆոֆօկրաֆներու եւ կազի վառարաններու .
Տասներկու տարին « Սինկըր » ընկերութեան քով մեքենայարդարութեան զբաղելէ յետոյ, այժմ զինավաճառ Չախարիս Գոնտարիսի քով պաշտօնեայ է զէնքերու եւ մեքենայարդարման ճիւղին մէջ .
Կարգ մը բարեկամ յաճախողներու ինքրանաց վրայ, պաշտօնէն դուրս ունեցած իր պարտապոյ ժամերը պիտի արամազդէ կարի մեքենաներու, ֆօնօկրաֆներու, կազի վառարաններու, նորոգութեանց եւ յարգարման .
Աս այժմ իրեն պէտք ունեցողները փոխանակ հոս ու հոն թափառելու՝ կրնան գիմել իր տունը Շարէ Մուհամէտ Ալի Թահի-էլ-Ռապէհ կրնան հարցնել նաեւ Միւ Սրճարանի Հայկականի Տնօրէններուն, և դարձեալ գիւրդութեան համար քարթ րօտատուով մը կրնան գիմել « Արշալոյսի » Տպարանին . նշանակելով իրենց հասցէն, փողոցին անունը եւ Տունին թիւը .
Իր նորոգութեանց վարձքը պիտի ստանայ իրեն յանձնուած աշխատութիւնները լրանալէ եւ փորձեր կատարուելէ յետոյ .
Կարի նոր մեքենաներ ալ կը վաճառէ .
19-50